10-ՐԴ ՆԻՍՏ

27 օգոստոսի, երեքշաբթի, Երեկոյան,1918թ.

Նախագահ՝ *Ավ. Սահակյան*

Օրակարգ՝

ա) Մասնավոր զենքերի գրավման ազգայնացում.

բ) Ֆինանսական հանձնաժողովի զեկուցումը պատգամավորների օրապահիկի մասին.

գ) Հանձնաժողովների զեկուցումները.

դ) Ընթացիկ խնդիրներ:

Սիր. Տիգրանյան (դաշնակց.) - Զեկուցանում է զինաթափության հարցի մասին: Քանի որ օրինագծի մասին անցյալ նիստում ընդհանուր գծերով արդեն խոսվել է, անհրաժեշտ է կետ առ կետ կարդալ օրինագիծը և քվեարկել:

Հ. Ազատյան (սոց.-դեմ.)-Առաջարկում է օրինագիծը նորեն ընդհանուր քննության ենթարկել, որովհետև ֆրակցիաների մեջ խնդրի մասին կա սկզբունքային տարբեր վերաբերմունք:

Թ. Ավդալբեկյան (սոց.-դեմ.) - Իր ճառը սկսում է հետևյալ խոսքերով. «Սա երկրորդ օրն է Հայաստանի Հանրապետության մեջ, որ պատմական նշանակություն ունի: Առաջինը կառավարության վստահություն տալու հարցն էր, իսկ երկրորդը ժողովրդին զինաթափ անելու խնդիրն է, որը հավասարազոր է ժողովրդին վստահություն տալու խնդրին:

Անցյալ նիստին ներքին գործերի նախարարը զինաթափման հարցը պատճառաբանում էր երկու հիմնական խնդիրներով. առաջինը՝ որ ոչ մի իշխանություն չի կարելի հաստատել մեր երկրում, որովհետև կառավարության կարգադրությունները չի կատարում ժողովուրդը, իսկ հարկադրանքի դեպքում նա զենքով դիմադրում է, և երկրորդ՝ «ժողովուրդը անզոր է որպես մի զինվորական ուժ»:

Ավդալբեկյանը համաձայն չէ նախարարի այն կարծիքին, թե ազգաբնակության զինվելը մեծապես նպաստում է երկրում անիշխանության տարածման: Օրինակ է բերում մի շարք երկրներ, ի միջի այլոց և Պարսկաստանը, որտեղ, չնայած որ ժողովուրդը զինված է, այնուամենայնիվ, օրինակելի կարգ է տիրում: Օրինակ է բերում նաև կանոնավոր զորքից: Պատգամավորը հարցնում է, թե զորքն էլ է զինված, բայց ինչու՞ կարգապահ է: Երկրում անիշխանություն լինելու պատճառները իշխանության ապարատի թուլության և, նույնիսկ, բացակայության մեջ է: Պատգամավորը օրինակ է բերում նախկին ազգային խորհուրդների և գյուղական կոմիսարների ապիկար գործունեությունը՝ լի զեղծումներով ու խաբեբայությամբ: Չնայած որ մեր երկրի սահմանները այսքան փոքր են, կառավարության կարգադրությունները գավառ հասնելու համար ամիսներ է տևում. ընդհանուր հարգանք չկա պաշտոնյաների մեջ:

Ահա մի շարք պատճառներ, որոնք առիթ են եղել ժողովրդի անվստահության դեպի մեր կառավարությունը և որոնք բնազդորեն հարկադրել են ազգաբնակչության՝ զենքի ուժով պաշտպանել իր քաղաքացիական և անհատական իրավունքները:

Իր առաջարկը Ավդալբեկյանը հետևյալ կերպով է ձևակերպում. նախ պետք է ուժեղ իշխանություն ստեղծել, օրինակ՝ դատաստանական գործը օրինավորել, ուժեղ միլիցիա կազմակերպել և այլն և այս բոլորից հետո միայն անցնել զինաթափման խնդրին: Իսկ մինչ այդ ժողովուրդը պետք է զինված մնա:

Անցնելով երկրորդ կետին, որ զինված ժողովուրդը անզոր է որպես զինվորական ուժ, Ավդալբեկյանը հարցնում է, թե՝ մենք ունե՞նք կանոնավոր զորք, որպեսզի ժողովրդի զինվածությունը չընդունենք: Եվ բերում է Նոր-Բայազետի, Սուրմա-

լուի և Սարդարապատի օրինակները, որտեղ, նրա կարծիքով, ժողովուրդը ուժեղ դիմադրություն է ցույց տվել թշնամուն:

Հռետորը շեշտում է մեր քաղաքական կացության անկայունության վրա և պնդում է, թե չպետք է արգելել, որ ժողովուրդը զինված մնա:

Ստ. Մալխասյան (ժողովրդ.) - Զինված ժողովուրդը մեր հասկացողությամբ նշանակում է անիշխանություն: Այնտեղ՝ որտեղ կառավարությունը թույլ է, ժողովուրդն ինքնապաշտպանության բնազդով տարված, ստիպված է լինում զինվել: Եվ ընդհակառակը, եթե կառավարությունն ուժեղ է, ժողովուրդը զինաթափվում է: Անցնելով անիշխանության հարցին, Մալխասյանը նկատում է, որ ոչ միայն Հայաստանում, այլև ամբողջ Կովկասում, հեղափոխության սկզբից մինչև այսօր, անիշխանություն է տիրում: Եթե կառավարությունը ցանկանում է մեր երկրում ամուր իշխանություն ստեղծել, պետք է ազատվի ամեն քայլափոխում հանդիպող բազմիշխանությունից: Երբ կառավարության առաջ կա զինված ժողովուրդ, մեր երկրում երբեք իշխանություն չի ստեղծվի: Բերում է մեր հարևան հանրապետությունների օրինակը. Վրաստանում և Ադրբեջանում արդեն ժողովրդին զինաթափ են արել:

Ի վերջո, պատգ. Մալխասյանը հայտնում է, որ Հայ ժողովրդական կուսակցությունը սկզբունքով համաձայն է ժողովրդի զինաթափման, սակայն շեշտում է, որ գործնական քայլերի ժամանակ կլինեն մի շարք խոչընդոտներ. նախ՝ զինաթափման ժամանակ իրենց զենքերը կհանձնի միայն խաղաղ ազգաբնակությունը, իսկ ոճրագործ տարրը ամեն կերպ կաշխատի թաքցնել, որով և ավելի վնաս կհասնի խաղաղ բնակիչներին. երկրորդ՝ որ փոքր ազգերը զինաթափումը հետին մտքով կհասկանան: Այսպիսով, ժողովրդական կուսակցությունը սկզբունքով համաձայնում է ժողովրդի զինաթափման խնդրին, եթե կառավարությունը նախ՝ կապահովե ժողովրդի քաղաքացիական իրավունքները ու գույքը, երկրորդ՝ առանց խտրության բոլորի վերաբերյալ կլինի զինաթափությունը և երրորդ, որ սահմանագլուխներում աստիճանաբար պետք է գրավվեն զենքերը, ի նկատի ունենալով, որ այնտեղ ավելի վտանգավոր է:

Գ. Ենգիբարյան (ժողովրդ.) - Առարկում է պատգ. Ա. Մելիքյանին և Թ. Ավդալբեկյանին: Նա միանգամայն զարմանում է Մելիքյանի այն հայտարարության վրա, թե հեղափոխական ժողովուրդը չպետք է զինաթափ անել: Հակառակ Մելիքյանին, նա շեշտում է, որ երբեմն հասարակական երևույթները հիվանդագին են լինում. բերում է վկայություն մի քանի գիտնականների գրվածքներից (Միխայլովսկի և այլն): Զարմանում է նույնպես, որ Մելիքյանը սոցիալիստ լինելով հանդերձ՝ այս խնդրում կանգնած է մասնավոր սեփականության պաշտպանության տեսակետի վրա, այն էլ զենքի հարցում: Անցնելով Ավդալբեկյանի հիմունքներին՝ Ենգիբարյանը գտնում է [դրանք] շատ խախուտ: Եվ, ի վերջո, համաձայնում է Հ[այ] ժող. կուսակցության տեսակետներին:

Ներքին գործերի նախարար Արամ - Հայտնում է դիտողություններ ընդհանուր հիմունքների մասին: Նա նկատում է, որ օրինագծի դեմ գլխավոր առարկություն անողը սոց.-դեմ. ֆրակցիան է, որ հենվում է իր թված փաստերի միայն երկուսի վրա, չնայած որ ինքը բերել է մի շարք փաստեր: Եվ իր հակաճառություններով սոց.-դեմ. ֆրակցիան փոխանակ հերքելու իր առաջ բերած հիմունքները, ապացուցեց, որ ավելի ևս անհրաժեշտ է դիմել զինաթափության: Պատգ. Ավդալբեկյանի այն հարցին, թե եթե զինված ժողովուրդը չարիք է, ապա ինչու՞ զինված զորքը չարիք չէ, նախարարը պատասխանում է, թե՝ նախ զորքը ենթարկվում է ուժեղ կարգապահության, երկրորդ՝ նա ծառայում է հանուրի հասարակական նպատակներին, իսկ ժողովրդի մեջ այդ երկուսն էլ բացակայում են: Նախարարը նկատում է, թե մենք երբեք չենք կարող հետևել Պարսկաստանի օրինակին, որովհետև այնտեղ ժողովուրդը կարգապահ է: Այն մեղադրանքին, թե պաշտոնական թղթերն ամիսների ընթացքում են գավառ հասնում, նախարարը պատասխանում է, թե հազիվ մի ամիս է, որ կառավարությունը գործի է անցել, ուրեմն, անհիմն է մեղադրել կառավարության՝ նման երևույթների համար: Այն դիտողության առթիվ, թե Բայազետը, Սուրմալուն և Սարդարապատը ժողովուրդը ինքն

է պաշտպանել, փաստերով ապացուցանում է, որ հակառակն է տեղի ունեցել: Ի վերջո, նախարարը դիտում է, որ սոց.-դեմ. ֆրակցիան մի անգամ ընդ միշտ խաչ է դրել այս կառավարության վրա և գտնում է կառավարությունը անընդունակ, անգործունյա: Եվ ասում է, եթե դուք շահագրգռված եք այս երկրի կարգի ու ամուր իշխանություն ստեղծելու մեջ, պարտավոր եք աջակցել կառավարության: Խաղաղ, ավազակային հակումներ չունեցող ժողովրդի զինվելը չարիք չէ, բայց բարիք էլ չէ, որովհետև միևնույնն է՝ նա չի կարող պաշտպանվել ավազակներից: Օրինագիծը խորհրդին ներկայացնելով մենք տարված ենք երկրում իշխանություն ստեղծելու, անարխիան ոչնչացնելու և ավազակների դեմ կռվելու բուռն ցանկությամբ: Ինչ վերաբերում է մանր ազգերին, երբ նրանք տեսնեն, որ զինաթափությունը կատարվում է անխտիր ամենքի վերաբերմամբ, ոչինչ դեմ չեն ունենա:

Հ. Ազատյան - Ոչինչ չունի այն մասին, որ կառավարությունը կռվի ավազակների դեմ, սակայն դրանից չի հետևում, թե պետք է ժողովրդին զինաթափ անել: Պատգամավորը դիտողություն է անում դաշնակցական հատվածի դեմ, որ տարիներ շարունակ հորդորել է ժողովրդին զինվել, իսկ այժմ համաձայնում է զինաթափ անել: Նկատում է, որ արտաքին վտանգը դեռ չի վերացել, Հայաստանի ներսն էլ լի է ավազակներով, որոնք չեն պատժվում: Միակ ելքն այն է, որ ժողովուրդն ինքը պաշտպանե իր քաղաքացիական իրավունքները: Ապա քննադատում է կառավարության, որ չի զբաղվում ընկերային հարցերով, ինչպես տեղական ինքնավարությունների, հողային, պարենավորման և համաճարակի խնդիրները: Նրա կարծիքով անիշխանության վերջ տալ կարելի է ոչ թե զենքի ուժով, այլ ընկերային հարցերի լուծումով: Պատգ. Ենգիբարյանի այն նկատողության, թե ընկերվարականները ձգտում են ամեն բանի համայնացման, Ազատյանը պատասխանում է, թե ընկերվարականները ձգտում են միայն աշխատանքի և արդյունաբերության միջոցների համայնացման և զենքի պետականացման կողմնակից չեն:

Թ. Ավդալբեկյան – Նորից առարկում է ներքին գործոց նախարարին և աշխատում է ցույց տալ ժողովրդի զինվորական ուժի արժեքը:

Ա. Մելիքյան (բոլշևիկ) - Հակաճառում է պատգ. Ենգիբարյանին: Զենքը չէ հանցանք բերողը, ասում է նա, այլ ստեղծված կացությունն ու տրամադրությունը: Ներքին գործոց նախարարի այն նկատողությունը, թե սոց.-դեմոկրատները խաչ են դրել կառավարության վրա, իրականության չի համապատասխանում: Մենք այն կարծիքի ենք, որ այսպիսի անկայուն պայմաններում հարկավոր է աջակցել կառավարության: Ապացույց, թեկուզ այն, որ այս օրենքի անցնելուց հետո մեր կուսակցությունը խոչընդոտ չի լինի նրան: Մելիքյանը զարմանք է հայտնում, թե ինչու՞ խորհրդի ամենախոշոր հատվածը՝ Հ. Հ. Դաշնակցությունը և թուրքերը, դրված խնդրի մասին չեն արտահայտվում: Նա դիտում է, որ եթե երբևիցե հեղափոխությունից հետո կյանքում առաջանում են բացասական երևույթներ, դրա պատճառը ոչ թե հեղափոխությունն է, այլ ժողովրդի մութ խավերը՝ տականքները: Ինքը՝ Մելիքյանը, կողմնակից չէ ժողովրդի զինաթափության, բայց պետք է արգելել ժողովրդին զենք կրել. զենքը թող մնա տանը՝ ինքնապաշտպանության համար:

Ս. Թորոսյան (դաշնակց) - Նկատում է, թե Հայաստանում նկատվող անիշխանությունը առաջացել է որոշ պատմական և հոգեբանական պատճառներից: Դաշնակցության հատվածը այն կարծիքի է, որ զենքը գրավելով անիշխանությունը հիմքից չի վերանա, այլ կվերանա միայն մի մասը: Եթե մեր երկրում ժողովրդական մի նոր հեղափոխություն առաջ գա, կառավարությունը դիմադրություն ցույց չի տա, քանի որ իշխանությունը ինքն էլ ծնված է հեղափոխությունից: Մեղադրել կառավարության հակահեղափոխության մեջ անհեթեթություն է: Զարմանալի է սոց.-դեմոկրատների համառությունը. երբ դաշնակցությունը զինում էր ժողովրդին, սոց.-դեմոկրատները միշտ հակառակ էին: Հիմա դաշնակցությունը ցանկանում է երկրում իշխանությունը հաստատելու համար զինաթափ անել ժողովրդին, սոց.-դեմոկրատները հակառակն են պնդում: Այն հանգամանքը, որ

մեր կուսակցությունը 30 տարի զենք է քարոզել, իսկ հիմա ցանկանում է զինաթափ անել, երբեք զարմանալի չէ, որովհետև զանազան ժամանակներում և զանազան քաղաքական պայմաններում տարբեր հրամայական պահանջներ են առաջ գալիս: Ներկայումս խոսքը պետության կազմակերպման և կանոնավոր զորք ունենալու մասին է: Բնականաբար, զինաթափման օրենքը կյանքում պետք է իրագործվի դանդաղ և աստիճանաբար: Անտեղի է այն մեղադրանքը, թե կառավարությունը հողային խնդիրներով չի զբաղվում. նախ՝ Հայաստանի ներկա սահմաններում խոշոր կալվածատիրական հողեր չկան. երկրորդ՝ մեր սահմանները դեռ որոշ չեն, հավանական է ընդարձակվեն և այսպիսի հանգամանքներում առնվազն դատապարտելի է հողի համայնացման մասին խոսելը: Եթե Հայաստանում ստեղծվի բնականոն կյանք, Հ.Հ. Դաշնակցությունն է, որ պետք է առաջին հերթին իրագործի հողերի համայնացումը:

Նախագահը առաջարկում է անցնել օրինագծի կետ առ կետ քննության: 15 ձայնով 7-ի դեմ անցնում է կառավարության առաջարկը:

«Զանգ», 31 օգոստոսի 1918թ.